ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 5—8-ը տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկա էին ընկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Բ. Ե. Սարկիսովը, Ֆ. Տ. Սարգսյանը, Պ. Պ. Անիսիմովը, Կ. Լ. Դալլամյանը, Լ. Ն. Ներսիսյանը, Հ. Մ. Բաղդասարյանը, Ռ. Ք. Սվեռլովան, Յա. Ի. Խաչիկյանը:

Ժողովը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա նշեց, որ 10-րդ հնգամյակի առաջին տարում հատուկ ուշադրություն է դարձվել գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացման, գիտության ու արտադրության կապի կատարելագործման և ժողովրդական տնտեսության մեջ գիտական նվաճումների արդյունքների ներդրումն արագացնող մի շարք կազմակերպական միջոցառումների իրականացման հարցերին։

Անդրադառնալով ակադեմիայի ստորաբաժանումների գործունեությանը, նա շեշտեց, որ հատկապես նշանակալի է հասարակական գիտությունների ներդրումը։ Հասարակագիտական ինստիտուտները հատուկ ուշադրություն են նվիրել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը և Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու տարբեր հարցերի մարքսլենինյան լուսաբանմանը։ Վ. Հ. Համբարձումյանը անդրադարձավ նաև ֆիզիկայի, մաթեմատիկայի, մեխանիկայի, աստղաֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և կենսաքիմիայի բնագավառներում ձեռք բերված նվաճումներին։

Այնուհետև ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտը խոսեց մի շարք գիտական հիմնարկությունների աշխատանքներում տեղ գտած թերությունների մասին, շեշտելով, որ այդ թերություններն անհրաժեշտ է շուտափույթ կերպով վերացնել։

Վ. Հ. Համբարձումյանը խոսեց նաև ՀՍՍՀ ԳԱ առաջին պրեզիդենտի՝ ականավոր գիտնական և հասարակական գործիչ Հ. Ա. Օրբելու գործունեության մասին։ Նա Հ. Ա. Օրբելուն բնութագրեց որպես խոշոր գիտնականի, իսկական քաղաքացու և հասարակական ակտիվ գործչի, որի ավանդը շափազանց մեծ է հանրապետության գիտությունների ակադեմիայի կազմակերպման և գիտությունների զարգացման գործում։

Ընդհանուր ժողովում Հ. Ա. Օրբելու մասին խոսեց ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին, որը նրան բնորոշեց որպես սովետական գիտության մեծ երախտավորի։ Ապա Բ. Բ. Պիոտրովսկին անդրադարձավ մեծ գիտնականի գիտահասարակական անխոնջ գործունեությանը, շեշտելով հատկապես Հ. Ա. Օրբելու մեծ դերը սովետական արևելագիտության զարգացման և մեծ Հայրենականի տարիներին Էրմիտաժի և Լենինգրադի ուրիշ թանգարանային հավաքածուների անգնահատելի արժեքները պահպանելու գործում։

Հանրապետության գիտությունների ակադեմիայի 1976 թ. գործունեության հիմնական արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ գլխավոր գիտական քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Ս. Ա. Բալանցը: Նա ասաց, որ 1976 թ. ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի գիտական և գիտակազմակերպչական գործունեությունն ընթացել է 10-րդ հնգամյակի առաջին տարվա պլանի համապատասխան։ Կենսագործելով կուսակցության XXV համագումարի պատմական որոշումները և ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնևի զեկուցման մեջ գիտության և մշակույթի գործիչների առջև դրված խնդիրները, ՀՍՍՀ ԳԱ գիտական հիմնարկների կոլեկտիվները հաշվետու տարում մեծ աշխատանք են կատարել հասարակական, բնական ու տեխնիկական գիտությունների բնագավառում։ 1976 թ. ակադեմիայի գիտական հիմնարկներում մշակվել են 154 պրոբլեմներ, ըստ որում, պլանավորված աշխատանքները հաջողությամբ են կատարվել։

Ակադեմիայի նախագահությունը և հիմնարկները մեծ ուշադրություն են նվիրել գիտական հաղորդումների քննարկմանը, վերադաս մարմինների որոշումների կենսագործմանն ուղղված հանձնարարականների մշակմանը։ Հաշվետու տարում, ասաց զեկուցողը, գիտությունների

ակադեմիայի նախագահության բաժանմունքների և գիտական կոլեկտիվների աշխատանքում տեղ են գրավել գիտության և արտադրության կապի զարգացման, գիտության նվաճումներն արտադրության մեջ ներդնելու հարցերը։

Այնուհետև Ս. Ա. Բակունցի զեկուցման շուրջ ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Գ. Ս. Դավթյանը, Բ. Ն. Առաքելյանը, ակադեմիայի փոխպրեզիդենտ Է. Հ. Միրզաբեկյանը, ՍՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ա. Ի. Ալիխանյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Ա. Բ. Բաղդասարյանը և Գ. Խ. Սարգսյանը։ Նրանք խոսեցին հանրապետության գիտությունների ակադեմիայի առջև ծառացած խնդիրների, ձեռք բերված հաջողությունների և ՀՍՍՀ ԳԱ աշխատանքներում եղած թերությունների մասին։

Ընդհանուր ժողովում հանձնվեցին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պարգևները։ Գիտությանը մատուցած մեծ ծառայությունների համար «Մեծարման գիր» ստացավ ակադեմիկոս Բ. Բ. Պիոտրովսկին։ Գիտական բազմամյա բեղմնավոր գործունեության համար «Վաստակագրով» պարգևատրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Գ. Մանվելյանը, ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամներ Է. Հ. Դավթյանը, Ռ. Վ. Ջաբյանը, տեխնիկական գիտությունների թեկնածու Ա. Մ. Մարջանյանը։

1976 թ. արժեքավոր գիտական հետազոտություններ կատարած և պրակտիկայում մշակումների արմատավորմանը մասնակցած մի մեծ խումբ գիտնականներ արժանացան «Գովեստագրի»։ Նրանց թվում էին նաև «Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի III հատորի մի շարք հեղինակներ։

Ժողովում «Պերօքսիդների կատալիտիկ ռադիկալների քայքայման մեխանիզմը» զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Բ. Նալբանդյանը։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Գ. Մաղաքյանի զեկուցումը նվիրված էր Հայկական ՍՍՀ ընդերքի հարստությունների բացահայտման գործում գիտական կանխատեսման դերին։

ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովի եզրափակիչ նիստում Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտներ ընտրվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Ա. Համբարձումյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը։ Գիտությունների ակադեմիայի նախագահության գլխավոր գիտական քարտուղար ընտրվեց հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ս. Ա. Բակունցը։

Ակադեմիայի ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար ընտրվեց Գ. Մ. Ղարիբյանը, ֆիզիկա-տեխնիկական գիտությունների և մեխանիկայի բաժանմունքի ակադեմիկոս քարտուղարի պաշտոնակատար՝ հանրապետության գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Հ. Տ. Ադանցը, քիմիական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար՝ Ա. Բ. Նալբանդյանը, երկրի մասին գիտության բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար՝ Հ. Գ. Մաղաքյանը, կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար՝ Վ. Հ. Ղազարյանը։ Տեղի ունեցան նաև Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամների (ակադեմիկոսների) և թղթակից անդամների ընտրություններ։

Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին Հ. Հ. Վարդապետյանը (ֆիզիկայի գծով), Ֆ. Տ. Սարգսյանը (կառավարման պրոցեսների գծով), Ս. Հ. Վարդանյանը (քիմիայի գծով), Ա. Տ. Ղանալանյանը (գրականության գծով)։

Ակադեմիայի թղթակից անդամներ ընտրվեցին Մ. Ե. Մովսեսյանը (ֆիզիկայի գծով), Ռ. Ռ. Վարշամովը (կառավարման տեսության գծով), Ա. Մ. Պետրոսյանցը (ատոմային էներգետիկայի գծով), Կ. Ա. Կոստանյանը (քիմիայի գծով), Ս. Գ. Մովսեսյանը (բիոքիմիայի գծով), Գ. Ե. Տեր-Ստեփանյանը (երկրաբանության գծով), Է. Ս. Գաբրիելյանը (դեղաբանության գծով), Ս. Ք. Ավդալբեգյանը (բժշկության գծով), Մ. Խ. Քոքանյանը (տնտեսագիտության գծով), Ա. Ա. Աբրահամյանը (լեզվաբանության գծով)։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի տարեկան ժողովի արդյունքներն ամփոփեց հանրապետության գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Ապրիլի 4-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի տարեկան ժողովը։ Բաժանմունքի գիտական հիմնարկների 1976 թ. կատարած աշխատանքների մասին զեկուցումով հանդես եկավ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Պ. Ադայանը։ Նա ասաց, որ հաշվետու տարում բաժանմունքի գործունեությունն ընթացել է ՍՄԿԿ XXV համագումարի

որոշումների կենսագործման ոգով։ Բոլոր ինստիտուտների գիտական կոլեկտիվներն ու կուսակցական կազմակերպությունները քննարկել են համագումարի որոշումները և կոնկրետ միջոցառումներ մշակել գիտական աշխատանքների որակը և գաղափարական մակարդակը բարձրացնելու վերաբերյալ։

Բաժանմունքը և ինստիտուտները լուրջ ուշադրություն են դարձրել նաև գիտակազմակերպչական աշխատանքներին, առաջնորդվելով ՀԿԿ XXVI համագումարի, ՀԿԿ կենտկոմի պլենումների և հատկապես գաղափարական հարցերին նվիրված 1976 թ. մայիսյան պլենումի որոշումներով։ Ծ. Պ. Աղայանը նշեց, որ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 60-ամյակի մասին» ՍՄԿԿ կենտկոմի որոշումը նոր կարևոր խնդիրներ է դնում հասարակական գիտությունների առջև և դարձել է բաժանմունքի գիտական հիմնարկների գործունեության հիմնաքարը։

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ բաժանմունքի բյուրոյի և ինստիտուտների աշխատանքների արդյունքներին և հայտնեց, որ ձեռք են բերվել զգալի հաջողություններ։

Ծ. Պ. Աղայանը նշեց, որ հաջողությունների կողքին գիտահետազոտական պլանների ու թեմաների կատարման, կոորդինացիոն աշխատանքների, գիտական կադրերի պատրաստման և այլ բնագավառներում կան շուտափույթ վերացում պահանջող որոշ թերություններ։

Վերջում զեկուցողը նշեց, որ 1977 թ. պետք է ավելի մեծ եռանդով աշխատել հանուն սովետական գիտության հետագա զարգացման և առաջընթացի, հանուն մեր երկրի հետագա բարգավաճման ու հզորացման, հանուն ՍՄԿԿ XXV համագումարի որոշումների անթերի կատարման։

Զեկուցման շուրջը ծավալվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Ս. Տ. Երեմյանը և Գ. Բ. Ղարիբջանյանը։

Ս. Տ. Երեմյանը պաշտպանեց դրականության և արվեստի ու Հայաստանի պատմության թանգարանները ակադեմիայի սիստեմի մեջ մտցնելու առաջարկը։

Գ. Բ. Ղարիբջանյանն արծարծեց հայ-ռուսական հարաբերությունների ֆոնի վրա առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայկական կամավորական շարժման և Բաքվի կոմունայի պատմության հարցերը գիտական նոր տեսանկյունից լուսաբանելու կարևորությունը։

Մտքերի փոխանակությանը մասնակցողները խոսեցին նաև հասարակական գիտությունների բաժանմունքի բազայի վրա երկու ինքնուրույն բաժանմունքների ստեղծման անհրաժեշտության մասին։ Նրանք ընդգծեցին, որ դա հասունացած հարց է, որին հարկավոր է մոտենալ գիտականորեն։

Ժողովում գիտական զեկուցումներով հանդես եկան ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Ջանջիյանը և ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Գ. Խ. Սարգսյանը։

Գ. Բ. Ջահուկյանը զեկուցեց «Կիմերների և կիմերական լեզվի պրոբլեմը արդի գիտության մեջ» թեմայով։

Գ. Խ. Սարգսյանի զեկուցումը նվիրված էր Հին Հայաստանի վարչատարածքային բաժանմանը։